Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
05 մայիսի 2015թ
ՈՐՈՇՈՒՄ թիվ ԿԳ/69-Ա

Փաստաբաններ Արամազդ Կիվիրյանին (արտոնագիր թիվ 800) և Դիանա Գրիգորյանին (արտոնագիր թիվ 717) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը՝ նիստը նախագահող Սիմոն Բաբայանի, անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանին, Մարտուն Փանոսյանի, Կարեն Սարդարյանի, Կարապետ Աղաջանյանի, Լիպարիտ Սիմոնյանի և Նելլի Հարությունյանի կազմով, քարտուղարությամբ Պալատի կարգապահական գործերը համակարգող՝ Նոնա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբաններ՝ Արամազդ Կիվիրյանին (արտոնագիր թիվ 800) և Դիանա Գրիգորյանին (արտոնագիր թիվ 717) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>

14.08.2014թ. Արմեն Ներսիսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող կամ Դիմումատու**) դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ՝ խնդրելով փաստաբաններ Արամազդ Կիվիրյանի և Դիանա Գրիգորյանին (**այսուհետ նաև՝ Պատասխանողներ**) ենթարկել կարգապահական պատասխանատվության: Դիմումատուն հայտնել է, որ իր իրավունքները դատարանում պաշտպանելու համար դիմել է փաստաբաններ Արամազդ Կիվիրյանին և Դիանա Գրիգորյանին, որոնք իրեն պատշաճ իրավական օգնություն ցույց չեն տվել այն է՝

- բարեխիղճ իրավական օգնություն ցույց չեն տվել և չեն ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը.
- փաստաբաններ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը Դիմողին վճարովի հիմունքներով իրավական օգնություն են ցույց տվել, սակայն փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր չեն կնքել.
- փաստաբաններ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը Դիմողին ամբողջապես չեն բացահայտել փաստաբանի հոնորարի չափը.
- փաստաբաններ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը խուսափում են Դիմողի հեռախոսազանգերին պատասխանելուց:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

09.09.2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 320-Ա/ԿԳ-14114 որոշմամբ փաստաբան Արամազդ Կիվիրյանի և Դիանա Գրիգորյանին նկատմամբ ՀՀ

փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.7.2, 3.3.1, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ և դիմող է ճանաչվել Արմեն Ներսեսյանը:

16.09.2014թ. կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Հարություն Հարությունյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմող ՀՀ քաղաքացի Արմեն Ներսիսյանը դիմելով Պալատ հայտնել է, որ իրեն պատկանող ավտոտնակի և հողակտորի սեփականության գրանցման համար անընդհատ գտնվում է կադաստրի հետ տարաձայնությունների մեջ: Իր իրավունքը վերականգնելու համար դիմել է դատարան: Դատական ատյաններում իր շահերը պաշտպանելու համար դիմել է «Արես» փաստաբանական գրասենյակի փաստաբաններ՝ Դիանա Գրիգորյանին և Արամազդ Կիվիրյանին: Դիմումատուն նշել է, որ այդ փաստաբաններին նա չի ճանաչել, նրանց երաշխավորել է իր աշխատակիցը՝ որպես խելացի և պատրաստված երիտասարդների: Մինչև փաստաբաններին դիմելը վարչական դատարանում իր շահերը ներկայացրել է փաստաբան Ժորա Հարությունյանը:

Դիմողն իր բացատրությունում նշում է, որ գործընթացը սկսելու համար 2013թ. լիազորագիր է տվել Դիանա Գրիգորյանին և Արամազդ Կիվիրյանին և ծառայություններ մատուցելու համար իրենց պահանջով 500 000 հազար գումար առձեռն առանց պայմանագիր կնքելու և բանկում համապատասխան վճարումներ կատարելու հանձնել է Արամազդ Կիվիրյանին: Այս երկու երիտասարդ փաստաբանների վարքագիծը Դիմումատուն համարել է տարօրինակ: Սակայն դատական գործընթացը առավել արագ և խելամիտ ներկայացնելու համար վերջինս համաձայնվել է, հուսալով որ մնացած բոլոր իրավական հարցերը ու խնդիրները նրանց կողմից կլուծեն: Դիմումատուն նշում է, որ հակառակ իր սպասումների և ակնկալիքների գործը ավելի ձգձգվեց, բարդացվեց, մտցրվեց փակուղի և դեռ ավելին յուրաքանչյուր նախադասություն կազմելու համար երիտասարդ փաստաբանները պահանջել են հավելյալ գումարներ:

Այժմ գործը գտնվում է դատական վարույթում, սակայն Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը հրաժարվում են գործընթացը շարունակելուց՝ պատճառաբանելով, որ անցած դատական նիստից դեռևս 300 000 հազար Դիմումատուն պարտք է մնացել, իսկ ներկա նիստին իրենց ներկայությունը ապահովելու համար Դիմումատուն պետք է ավելացնի ևս 200 ՕՕՕ հազար դրամ:

Ըստ Դիմումատուի Պատասխանողներին նման անհարգալից վերաբերմունքը, հեռախոսազանգերի է, պատասխանելուց խուսափելը, նրան ստիպում է հրաժարվել ծառայություններից և պահանջել ետ վերադարձնել 500 000 հազար վճարված

գումարը և փաստաթղթերի բնօրինակները: Դիմումատուի պնդմամբ Պատասխանողները խուսափում են և ոչինչ չեն ցանկանում վերադարձնել:

Ի լրումն նշվածի 03.10.2014թ. Դիմողի կողմից Պալատ է մուտքագրվել ևս մի գրություն, որտեղ վերջինս նշել, որ պահանջում է ետ վերադարձնել գումարը, իսկ նրանք բնականաբար հրաժարվել են պատճառաբանելով, որ իրենք անվճար են ծառայություն մատուցել և դադարեցրել են իրենց գործունեությունը, քանի որ կատարված աշխատանքի դիմաց համապատասխան փոխհատուցում չեն ստացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը

Նախապատրաստողի կողմից 27.10.2014 թվականին Պատասխանողները հրավիրվել են անհրաժեշտ բացատրություններ ներկայացնելու, սակայն նրանցից ոչ մեկը չի ներկայացել: Վերջիններս ծանուցվել են նաև սույն կարգապահական գործի քննության շրջանակներում հրավիրված Խորհրդի նիստերին, սակայն նույնպես չեն ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձի կողմից 17.11.2014թ. կազմված եզրակացության համաձայն՝ նախապատրաստող անձը գտել է, որ Պատասխանողների կողմից կատարված արարքը չի բավարարում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.3.1 և 3.6.1 խախտման հատկանիշներով սահմանված արարքի հատկանիշներին: Նախապատրաստողը հաստատված է համարել Պատասխանողների և դիմումատուի միջև իրավաբանական օգնություն տրամադրելու փոխհարաբերությունների առկայության փաստը:

24.11.2014թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 04.03.2015թ, 27.03.2015թ., 20.04.2015թ. և 06.05.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ՝ Վարույթի կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին**

ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Պալատի խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. 26.04.2013թ-ից մինչև 24.09.2014թ-ը ընկած ժամանակահատվածում փաստաբաններ՝ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը ԵԿԴ/0990/02/13 քաղաքացիական գործով հանդես են եկել, որպես Դիմումատուի փաստաբաններ՝ ներկայացուցիչներ[1]: Մասնավորապես՝

- 26.04.2013թ. փաստաբաններ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը Դիմումատուի անունից դատարան ներկայացրել են դիմում՝ Երևան քաղաքի Պուշկին 8/2 հասցեում գտնվող 17.3 քմ մակերեսով հողատարածքի և Երևան քաղաքի Պուշկին 8/3 հասցեում գտնվող 15.1 քմ. մակերեսով հողատարածքի նկատմամբ՝ սեփականության իրավունքով Արմեն Ներսեսյանի տիրապետման փաստը ճանաչելու և Երևան քաղաքի Պուշկին 8 հասցեում գտնվող Արմեն Ներսեսյանի կողմից սեփականության իրավունքով օգտագործվող 63.36 քմ. հողատարածքի, Երևան քաղաքի Պուշկին 8/2 հասցեում գտնվող 17.3 քմ մակերեսով հողատարածքի և Երևան քաղաքի Պուշկին 8/3 հասցեում գտնվող 15.1 քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ դիմող Արմեն Ներսեսյանի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին.
- Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.10.2013 թվականի որոշմամբ դիմումը թողնվել է առանց քննության:
- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.12.2013թ. որոշմամբ վերացվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 09.10.2013 թվականի որոշումը և գործը ուղարկվեց նոր քննության:
- Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.06.2014 թվականի որոշմամբ կրկին անգամ հայցը թողնվել է առանց քննության:
- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.10.2014թ. որոշմամբ կրկին անգամ դատական ակտը բեկանվել է գործն ուղարկվել նույն դատարան:

Պատասխանողների կողմից դիմումատուին իրավաբանական օգնություն տրամադրելու և նրանց միջի փաստաբան-վստահորդ փոխհարաբերությունների առաջացման փաստը Պալատի խորհուրդը հաստատած է համարել հիմք ընդունելով դիմումատուի բացատրությունները, www.datalex.am տեղեկատվական համակարգից ստացված նյութերը:

2. Դիմումատուի և Պատասխանողների միջև իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ պայմանագիր չի կնքվել:

[1] Տես՝ http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=2&courtID=0&caseID=14355223812297271

Որևէ իրավաբանական փաստի բացակայությունն այդպիսին համարելու համար, Պալատի խորհուրդը բավարար է համարում բացակայությունը վկայակոչողի պնդումը, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստի բացակայությունն այլ կերպ հնարավոր չէ ապացուցել և այն պնդող անձը չի կարող ողջամիտ ջանքեր գործադրելով ապացուցել, որ այդ իրադարձությունը տեղի չի ունեցել:

Տվյալ դեպքում, կարգապահական վարույթի որևէ կողմ չի ներկայացրել իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ պայմանագիր, հետևաբար Պալատի խորհուրդը գտնում է, որ այդպիսի պայմանագիր չի կնքվել:

Պալատի խորհուրդն այս փաստի հետ կապված արձանագրում է, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 09.09.2014թ. թիվ 320-Ա/ԿԳ-14114 որոշմամբ իրավացիորեն այս խախտման համար կարգապահական վարույթ չի հարուցվել՝ վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ:

3. Փաստաբաններ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը հրաժարվել են Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ:

Փաստաբանների կողմից իրավաբանական օգնություն ցույց տալուց հրաժարվելու փաստն ապացուցված է համարվում, քանի որ՝

- *այդպիսի պնդմամբ հանդես է եկել Դիմումատուն,*
- *Պատասխանողները հակառակը չեն ապացուցել, մինչդեռ Պալատի կողմից այդպիսի հնարավորություն նրանց տրվել է՝ նախապատրաստողի կողմից 30.10.2014 թվականին, իսկ Պալատի խորհրդի կողմից՝ 04.03.2015թ, 27.03.2015թ., 20.04.2015թ. և 06.05.2015թ. Պատասխանողները հրավիրվել են անհրաժեշտ բացատրություններ ներկայացնելու, սակայն նրանցից ոչ մեկը չի ներկայացել և չի տվել որևէ բացատրություն:*

6. <u>Պատասխանողների անձը բնութագրող հանգամանքները</u>

Պատասխանողներ՝ Դիանա Գրիգորյանը (արտոնագիր թիվ 717) և Արամազդ Կիվիրյանը (արտոնագիր թիվ 800) 2007-2015թթ ընկած ժամանակահատվածում կարգապահական պատասխանատվության չեն ենթարկվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արամազդ Կիվիրյանին և Դիանա Գրիգորյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալուց հրաժարվելու կապակցությամբ.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ:

Այսպես՝ Կանոնագրքի 2.7.2. ենթակետով փաստաբանի վրա դրվում է պարտականություն՝

- *վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու,*
- *իրավունքի համապատասխան ճյուղի իմացության,*
- *վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն կատարելու,*
- ***<u>հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարելու:</u>***

Միաժամանակ Կանոնագրքի 3.5.5 ենթակետը նույնպես փաստաբանին մղում է ակտիվ գործունեության նշելով փաստաբանի ջանասիրությունը, ժամանակին տրվող խորհուրդները և վստահորդի անունից հանդես գալու պարտականությունը:

Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը Պալատի խորհուրդը, գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Տվյալ դեպքում, պատասխանողները պարտավոր էին հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ կատարել, ինչպես նաև վստահորդի անունից հանդես գալ, ինչը սակայն չեն կատարել:

Կանոնագրքով իրավաբանական օգնություն տրամադրելուց հրաժարվելու հիմքերը հստակ նշված են և Պատասխանողներն առնվազն պետք է այդպիսի փաստեր վկայակոչեին և Վարույթի կարգի 15-րդ հոդվածի առաջին մասի համաձայն ապացուցեին:

Վերոգրյալը նկատի ունենալով Պալատի խորհուրդն արձանագրում է, որ <u>փաստաբաններ Արամազդ Կիվիրյանի և Դիանա Գրիգորյանի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերով նախատեսված կանոններին:</u>

7.2. Փաստաբանի հոնորարի չափը ամբողջապես չբացահայտելու կապակցությամբ.

Կանոնագրքի **3.3.1** ենթակետով սահմանված կանոնի համաձայն՝ ***<u>վարձատրությունը (հոնորարը), որը փաստաբանական գրասենյակը ստանում է, պետք է ամբողջապես բացահայտվի վստահորդին:</u>*** *Հոնորարի չափի և վճարման կարգի շուրջ համաձայնության են գալիս կողմերը՝ իրենց հայեցողությամբ: Հոնորարի չափի մեջ չի ներառում փաստաբանի կատարած այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (մասնավորապես՝ տրանսպորտային, թարգմանչական կամ մասնագետներին հրավիրելու, տպագրության, պատճենահանման, փոստային և նոտարական ծախսերը, ինչպես նաև այլ դատական ծախսերը), եթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի նախատեսվել:*

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ կողմերի միջև պայմանագիր չի կնքվել, իսկ հետագայում էլ դատական ատյանների փուլերում կամ որևէ դատավարական գործողություն կատարելու համար վստահորդից գումար պահանջելու և ստանալու փաստերը Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պետք է ապացուցեր դիմումատուն: Պալատի խորհուրդ միայն դիմումատուի բացատրությունը բավարար ապացույց չի համարում այդ փաստերը հաստատված համարելու համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենքի և վարքագծի կանոնագրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ փաստաբանի***:

Տվյալ դեպքում, այս նորմի կիրառմամբ, Պալատի խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթն այս մասով ենթակա է կարճման:

7.3. Դիմողի հեռախոսազանգերին պատասխանելուց խուսափելու կապակցությամբ.

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Սույն գործի քննության շրջանակներում Պալատի խորհրդին տրված բացատրություններում Դիմումատուն հայտնել է, որ ներկայացուցչություն իրականացնելիս, մինչև փաստաբանական ծառայություններից հրաժարվելը իր հեռախոսազանգերին Պատասխանողները պատասխանում էին և հայցվող տեղեկությունը հայտնել են նրան: Նշված բացատրությունից հետևում է, որ փաստաբաններ՝ Արամազդ Կիվիրյանը և Դիանա Գրիգորյանը չեն կատարել Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջին հակասող արարք: Պալատի խորհուրդը Պատասխանողների կողմից իրավաբանական օգնություն տրամադրելուց հրաժարվելու վարքագծին արդեն վերը տվել է իրավական գնահատական, հետևաբար իրավաբանական օգնություն տրամադրելուց հրաժարվելուց հետո հեռախոսազանգերին չպատասխանելը չի կարող այս պայմաններում խախտում

համարվել:

Ուստի տվյալ իրավիճակում Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

*****

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Նույն հոդվածով նախատեսված են կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝

1) նկատողություն.
2) խիստ նկատողություն.
3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.
4) տուգանք.
5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով նաև Պատասխանողների կողմից դիմումատուին անօգնական վիճակում թողնելու հետևանքը և Պատասխանողների կողմից կարգապահական տույժեր չունենալու հանգամանքը, գտնում է, որ Պատասխանողների նկատմամբ պետք է կիրառի խիստ նկատողություն տույժի տեսակը, ինչպես նաև լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցելը, որպես՝ լրացուցիչ տույժ:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի, 39.7. հոդվածի, 39.8-րդ հոդվածի, 39.9. հոդվածի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ և 31-րդ հոդվածների պահանջներով,

Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ՝ Դիանա Գրիգորյանին (արտոնագիր թիվ 717) և Արամազդ Կիվիրյանին (արտոնագիր թիվ 800) ճանաչել մեղավոր Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2. և 3.5.5. ենթակետերի պահանջների խախտման համար:

1.1. Փաստաբաններ՝ Դիանա Գրիգորյանի (արտոնագիր թիվ 717) և Արամազդ Կիվիրյանի (արտոնագիր թիվ 800) նկատմամբ նշանակել տույժ՝ խիստ նկատողության ձևով:

1.2. Փաստաբաններ՝ Դիանա Գրիգորյանի (արտոնագիր թիվ 717) և Արամազդ Կիվիրյանի (արտոնագիր թիվ 800) նկատմամբ նշանակել լրացուցիչ տույժ՝ 8 (ութ) ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, իրենց հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության ձևով:

2. Փաստաբաններ՝ Դիանա Գրիգորյանի (արտոնագիր թիվ 717) և Արամազդ Կիվիրյանի (արտոնագիր թիվ 800) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.3.1. և 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը. հիմնավորված չլինելու պատճառով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմող՝ Արմեն Ներսիսյանին, փաստաբաններ՝ Դիանա Գրիգորյանին և Արամազդ Կիվիրյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան